

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ**

***(նոր խմբագրություն)***

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի համաժողովի որոշմամբ

ԱՎ ՆԱԽԱԳԱՀ \_\_\_\_\_ Գ.Վ. ԳԱԼՍՅԱՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

*(նոր խմբագրություն)*

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. ««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության ծրագրերի կանոնակարգ»-ը մշակված է «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության (այսուհետ՝ **Կազմակերպության**) կանոնադրության պահանջներին համապատասխան:

- 1.2. Սույն կանոնակարգով սահմանվում են **Կազմակերպության** ծրագրերի (այսուհետ՝ ծրագրեր) նպատակը, տեսակները, ֆինանսական միջոցների տրամադրման (հատկացման) կարգը:
- 1.3. Ծրագրերի համար հատկացվող տարեկան ֆինանսավորման ծավալը, որը կազմում է **Կազմակերպության** բյուջեի ծախսերի առնվազն 70%-ը, և յուրաքանչյուր ծրագրին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը որոշվում է **Կազմակերպության** համաժողովի կողմից՝ **Կազմակերպության** տարեկան նախահաշվի հաստատման ժամանակ:
- 1.4. Յուրաքանչյուր տարվա վերջում **Կազմակերպության նախագահը** համաժողովին է ներկայացնում հաշվետվություն ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ:

## 2. ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ

- 2.1. **Ծրագրերի նպատակն է.** **Կազմակերպության** գործունեության արդյունավետության բարձրացումը, **Կազմակերպության** անդամներին դրամական (նյութական) և սոցիալական օգնություն տրամադրելու ճանապարհով՝ վերջիններիս սոցիալական պաշտպանվածության և կենսամակարդակի բարձրացումը:
- 2.2. **Կազմակերպության ծրագրերն են.** «Ուրախություն և տոն», «Առողջության պահպանում», «Սոցիալական օգնություն», «Մշակույթ, սպորտ և հանգիստ» ու «Ուշադրություն»:  
 Ծրագրերը, բացառությամբ՝ «Ուշադրություն» ծրագրի, իրականացվում են միայն **Կազմակերպության** անդամների և նրանց մոտ հարազատների համար:

## 3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- 3.1. «Ուրախություն և տոն» ծրագրով տրամադրվում է ֆինանսական աջակցություն **Կազմակերպության** անդամի ամուսնության կամ երեխայի ծննդյան կապակցությամբ, տրվում նվեր (դրամական նվեր) ծննդյան օրվա (որպես կանոն՝ հորեյանական), Կանանց (Մայրության և գեղեցկության) տոնի և այլ տոների կապակցությամբ՝ **Կազմակերպության** անդամին, իսկ Ամանորի կապակցությամբ՝ **Կազմակերպության** անդամի մինչև 11 տարեկան երեխաներին և (կամ) Հայաստանի Հանրապետությունում բնակվող թոռներին:
- 3.2. «Առողջության պահպանում» ծրագրով իրականացվում է առողջարաններում և հանգստյան տներում բուժման ու հանգստի համար **Կազմակերպության** անդամի կատարած ծախսերի մասնակի փոխհատուցում:
- 3.3. «Սոցիալական օգնություն» ծրագրով տրամադրվում է դրամական օգնություն **Կազմակերպության** անդամի կամ **Կազմակերպության** անդամի մոտ հարազատի մահվան, **Կազմակերպության** անդամի բնակարանի (տան) գողության և (կամ) հրդեհի, **Կազմակերպության** անդամի վճարովի վիրահատության (բացառությամբ՝ կոսմետիկ) և (կամ) վճարովի թանկարժեք բուժման դեպքերում:
- 3.4. «Մշակույթ, սպորտ և հանգիստ» ծրագրով **Կազմակերպության** անդամների համար կազմակերպվում են մշակութային, սպորտային և հանգստի կազմակերպման տարաբնույթ միջոցառումներ:

3.5. «Ուշադրություն» ծրագրով տրվում է հուշանվեր (դրամական նվեր) տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող (երկարամյա աշխատանքային ստաժ ունեցող) **Կազմակերպության** անդամի աշխատանքից ազատվելու կամ հաշմանդամության (հիվանդության) հետևանքով անաշխատունակ դարձած **Կազմակերպության** անդամի աշխատանքից ազատվելու դեպքերում, ինչպես նաև՝ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղից կենսաթոշակի անցած **Կազմակերպության** նախկին անդամի հոբելյանական տարեդարձի առթիվ:

#### 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցները տրամադրվում են արհկոմիտեի որոշմամբ՝ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

4.2. Ընթացիկ տարում, համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, դրական ընթացք չստացած դիմումները բավարարվում են հաջորդ օրացուցային տարում՝ առաջնահերթ կերպով:

4.3. «Ուրախություն և տոն» (ամուսնության կամ երեխայի ծննդյան կապակցությամբ ֆինանսական աջակցության մասով), «Առողջության պահպանում» և «Սոցիալական օգնություն» ծրագրերն իրականացվում են առնվազն վեց ամիս անընդմեջ **Կազմակերպության** անդամ հանդիսացող անձի (Կազմակերպության անդամ հանդիսացող անձի մոտ հարազատի) համար: Բացառիկ դեպքերում, արհկոմիտեի որոշմամբ ծրագրերը կարող են իրականացվել նաև սահմանվածից քիչ ժամանակով **Կազմակերպության** անդամ հանդիսացող անձի (Կազմակերպության անդամ հանդիսացող անձի մոտ հարազատի) համար:

4.4. Սույն կանոնակարգի շրջանակներում մոտ հարազատ են հանդիսանում **Կազմակերպության** անդամի կինը (ամուսինը), ծնողները (նույն բնակարանում ապրող ամուսնու կամ կնոջ ծնողները), երեխաները, հարազատ քույրերն ու եղբայրները, իսկ մոտ հարազատ չեն համարվում առանձին ընտանիք ունեցող և **Կազմակերպության** անդամի հետ նույն բնակարանում (տանը) չապրող 23 տարին լրացած երեխաները, հարազատ քույրը (եղբայրը):

4.5. «Ուրախություն և տոն» ծրագիր.

4.5.1. Ամուսնության կամ երեխայի ծննդյան կապակցությամբ ֆինանսական աջակցությունը տրամադրվում է **Կազմակերպության** անդամի դիմումի դեպքում: Դիմումին կցվում է ամուսնության (երեխայի ծննդյան) վկայականի պատճենը: Ֆինանսական աջակցության ծավալը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ:

4.5.2. Ծննդյան օրվա և տոների կապակցությամբ **Կազմակերպության** անդամին տրվող նվերի (դրամական նվերի), իսկ Ամանորի կապակցությամբ **Կազմակերպության** անդամի մինչև 11 տարեկան երեխաներին և (կամ) Հայաստանի Հանրապետությունում բնակվող թոռներին տրվող նվերների համար հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը (դրամական նվերի չափը) սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող թոռների տարիքային սահմանափակումը, որը չի կարող գերազանցել տասը տարեկանը, կատարվում է արհկոմիտեի որոշմամբ:

4.6. «Առողջության պահպանում» ծրագիր.

Կատարված ծախսերի մասնակի փոխհատուցումը տրամադրվում է **Կազմակերպության** անդամի դիմումի դեպքում: Դիմումին կցվում է առողջարանում (հանգստյան տանը) բուժվելու (հանգստանալու) վերաբերյալ պայմանագրի և կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի պատճենները: Մասնակի փոխհատուցման չափը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ:

4.7. «Սոցիալական օգնություն» ծրագիր.

4.7.1. **Կազմակերպության** անդամի մահվան (**Կազմակերպության** անդամի մոտ հարազատի մահվան) դեպքում տրամադրվող դրամական օգնության ծավալը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ: Դրամական օգնություն տրամադրվում է **Կազմակերպության** անդամի (**Կազմակերպության** անդամի մահվան դեպքում՝ մոտ հարազատի) դիմումի դեպքում: Դիմումին կցվում են մահվան վկայականի և դիմողի անձնագրի պատճենները:

**Կազմակերպության** անդամի մահվան դեպքում դրամական օգնություն ստանալու համար դիմում կարող է ներկայացնել **Կազմակերպության** անդամի կինը (ամուսինը), վերջինիս մահացած լինելու դեպքում՝ երեխաներից մեկը, իսկ երեխա չունենալու դեպքում՝ հարազատ քույրը կամ եղբայրը:

4.7.2. Բնակարանի (տան) գողության և (կամ) հրդեհի դեպքերում տրամադրվող դրամական օգնության ծավալը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ: Դրամական օգնությունը տրամադրվում է **Կազմակերպության** անդամի դիմումի դեպքում: Դիմումին կցվում է համապատասխան իրավասու մարմնի (կազմակերպության) կողմից տրված պատճառված նյութական վնասը հավաստող փաստաթղթի պատճենը:

4.7.3. **Կազմակերպության** անդամի վճարովի վիրահատության, բացառությամբ՝ կոսմետիկ վիրահատության, և (կամ) վճարովի թանկարժեք բուժման դեպքում տրամադրվող դրամական օգնության ծավալը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ: Դրամական օգնությունը տրամադրվում է **Կազմակերպության** անդամի դիմումի դեպքում: Դիմումին կցվում է կատարված վիրահատությունը և (կամ) բուժումը հավաստող փաստաթղթերի կամ էլ անաշխատունակության թերթիկի պատճենները:

4.8. «Մշակույթ, սպորտ և հանգիստ» ու «Ուշադրություն» ծրագրեր.

Հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը սահմանվում է արհկոմիտեի որոշմամբ:

4.9. Որպես կանոն, «Առողջության պահպանում» և «Սոցիալական օգնություն» ծրագրերով ներկայացված դիմումները արհկոմիտեն քննարկում է ընթացիկ տարվա ապրիլ, հուլիս, հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսների առաջին տասն օրերի ընթացքում:

Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում արհկոմիտեն կարող է նիստ հրավիրել նաև ըստ անհրաժեշտության:

Ընթացիկ տարվա համար դիմումների վերջնաժամկետ է սահմանվում նոյեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը:

4.10. «Ուրախություն և տոն» (ամուսնության կամ երեխայի ծննդյան կապակցությամբ ֆինանսական աջակցության մատով), «Առողջության պահպանում» և «Սոցիալական օգնություն» ծրագրերով ֆինանսական աջակցություն (ծախսերի մասնակի փոխհատուցում) ստանալու համար դիմումները **Կազմակերպության** նախագահին են ներկայացվում համապատասխան հիմքի ծագման օրվանից երկամսյա ժամկետում:

4.11. «Առողջության պահպանում» ծրագրով առողջարանում (հանգստյան տանը) բուժվելու

(հանգստանալու) համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման համար **Կազմակերպության** անդամը կարող է դիմել 3 տարին մեկ անգամից ոչ ավելի պարբերականությամբ:

- 4.12. Որպես կանոն, «**Սոցիալական օգնություն**» (բացառությամբ՝ մահվան դեպքի) և «**Առողջության պահպանում**» ծրագրերով դրամական օգնության (ծախսերի մասնակի փոխհատուցման) ծավալը **Կազմակերպության** յուրաքանչյուր անդամի համար եռամյա կտրվածքով չի կարող գերազանցել 100000 ՀՀ դրամը:

## 5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.1. Սույն կանոնակարգի ընդունումը և նրանում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են **Կազմակերպության** համաժողովի որոշմամբ:
- 5.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում **Կազմակերպության** համաժողովում քվեարկությամբ հաստատվելուց անմիջապես հետո: